

## ԳՐԱԿՈՍՏԱԿԱՆ

### ՀԱՅՈՑ ՀԻՆ ԵՒ ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԲՈՒՀԻ Գ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

•

Կիլիկիոյ կաթողիկոսութեան Տպառնիր լոյս ընծայած է սոյն երկը 1988 թուին: Մտաւոր համար մըն է այն, բազկացած 756 էջերէ, բաժնուած երեք մասերու:

Դրքին վնասնորդ էջին վրայ սու տողերով ներկայացուած է այն:

«Ներկոյ համարը հայ ժողովրդի անցելի աւելի քան հազար չորս հարիւր տարիների գրականութեան ամփոփումն է, զիցարտուական շրջանից մինչև 19-րդ դարի Մխիթարեանները, առնչուած նրա մշակոյթի և պատմութեան հանդամանքներին:

Առումնուիրութիւնը, որը հիմնուած է հայոց հին և միջնադարեան գրականութեան բնոգաւառում կատարուած նորոգոյն հետազօտութիւնների վրայ, ծանօթացնուած է ընթերցադին միջնադարեան գրականութեան գլխաւոր փուլերին, անհատ գրազների կարեւորագոյն ներդրումը՝ ներին, տալով գրական շարունակուազ աւանդների ընթացքը, գողոփարական և ժամրային փոփոխութիւնները»:

Հատորին բավանդակութիւնը կրնանք ամփոփիւ սապէս:

Էջ 9, «Երկու Խօսք»: «Եղինակին կոզմէ, ուր կ'ըսէ. այս գրքին տառչին հրատարակութեան շարագ սպառումը և իմ բարեկամ մասնագէտների խրախուանքը, գրդեց ինձ մտածելու դրքի 2-րդ հրատարակութեան մասին»: Այդ ութիւ Հեղինակը կատարած է կարգ մը փոփոխութիւնները:

Առաջարանը կը գրաւէ ութ էջ (11-18), որ տեղ Հեղինակը կը յայտարարէ թէ պատմական և երեք շրջաններում էլ

քննութեան առարկան հայ գրականութեան հետազօտութիւնն է, գեղարուեաստական արժէք ունեցող նիւթերի ուսումնասիրութիւնը»: Մշակութային բազմաթիւ հարցեր գուրս մնացած են իր ուսումնասիրութեան սահմաններէն: Առաջացմէ ովերցուածէ միայն այն մասը, որը բացայաց գեր է խողացել հին և միջնադարեան շրջանի գեղարուեաստական գրականութեան մէջ ։

Ապա կայ գայ և Հայ Գրականութեան Պատմութեան Անցած Փորձը — Հին և Միջնադարեան շրջան — 2 (19-24):

Գրքին Առաջին Մասի նիւթն է Հին Շրջանի Գրականութիւն, Ակիզրից մինչև 10-րդ դար» (25):

Այս բաժնի Հինդերորդ Գլուխը խորագրուած է Հայ Պատմագրութիւնը 5-րդ դարում: Գաստկան Շրջանի Ակիզրից և Գուգաթնուկէտը» (143): Այսաեղ յաջորդաւոր ներկայացուած են՝ Կորիւն, Ազաթանգեղոս, Փաւատոս Բաւզանդ, Դադար Փարտեցի, Եղիշէ, և Մավսէ Խորենացի:

Գրքին Երկրորդ Մասին նիւթն է Շրջնադարեան Գրականութիւն, 10-ից մինչև 17-րդ Դար» (էջ 287):

Այս բաժնին մէջ, առանձին գլուխով (ԺԱ), ընդարձակօրէն ներկայացուած է և Հայ Ժաղվրդական Դիւցազնավէլութ՝ Սամայ Ծահը» (380-394):

Երրորդ Մասին նիւթն է Վեհանութեան Գրականութիւն, 17-18-րդ Դարեր» (581):

Այս բաժնին մէջ, առանձին գլուխով (ԺԱ), ընդարձակօրէն ներկայացուած է և Հայ Ժաղվրդական Դիւցազնավէլութ՝ Սամայ Ծահը» (621-641): Ատոր կը յաջորդէ ԺԱ: Գլուխը, որ կը նկարագրէ Ականզական Քնարերգութիւննը» (էջ 642-677):

Բառներորդ Գլուխին վերնազիրն է և Հայ Մշակութը 18-րդ Դարում: Միւթարեան Միւթարեանութիւն» (էջ 692): Ի վերջոյ կայ «Եղրափակիչ Խօսք» (էջ 704-706):

Յաջորդ էջերուն մէջ կը տեսնենք Մատենագիտութիւն (էջ 707-735): Իւրաքանչիւր գլուխին համար առանձին, իսկ Հինդերորդ Գլուխին մէջ յիշուած պատմիչներուն համար՝ զատզատ: Այսպէս է նաև Տասնեհինդերորդ Գլուխի պարա-

գային. իւրաքանչիւր տաղերգու — Յովհաննէս Երզնկացի, Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Յավհաննէս Թէկուրոնցի, Մշրտիչ Նաղաշ, և Գրիգորիս Աղթամարցի — ունի իր ուրոյն մատենագիտութիւնը: Նոյն ձեռվ տրուած են նշանաւոր աշուղներ՝ Նաղաշ Յովհաննի և Սայեաթ-Նովայի վերաբերողները:

Ապա կու գայ «Անուանացանկ»ը (էջ 736—751), վերջին էջերը կը պարունակին գրքին «Բավանդակութիւն»ը (753—756):

Գրքին սկիզբը դրուած է Հայաստանի քարտէսը, հայերէն և անգլերէն լեզուներով: Իսկ մէջ ըստ մէջ զետեղուած մասնակարչական 15 նմոյշները, գունաւոր վերաբատագրութեամբ, կը կազմեն հասոռիս գեղարուսատական գարդարանքը:

Մար ըսթերցման ժամանակ տեղանք հանդիպեցանք նկատողութեան արժանի կէտերու, զարս կը ներկայացնենք ստորեւ:

1. — էջ 92—93ի միջն նկար, «Սաղկող Թօրոս Ռազինի»: Աւզելիի՝ Տարօնացի:

2. — էջ 184, տող վերէն 11. «Միտքը»: Աւզելիի՝ մեղքը:

3. — էջ 265, տող վարէն 10. «Ասհակդուխտից մեզ է հասել ինը քառեակ ունեցող մի բանաստեղծութիւն»: Աւզելիի՝ Տարօնացի: Տես Հակ, 1951, էջ 366:

4. — էջ 266, տող վերէն 4—5. «Շարակնոցում տեղ չեն գտել ոչ Սահակդուխտի և ոչ էլ Խոսրովիդուխտի երգերը»: Վերջինը ճիշդ չէ. Խոսրովիդուխտի գրած շարականը, «Զարմանալի է ինձ . . . կը գտնուի Շարակնոցներու մէջ. օր. Տպ. Երուսաղէմ», 1936, էջ 747:

Իսկ Սահակդուխտի գրածները շարական չեն, այլ՝ կացուրդ. և կը գտնուին կացրդարան կոչուած սակաւագիւտ ձեռագիրներու մէջ:

5. — էջ 273, տող վերէն 4.

«Բաղմաչեայ հոյլք քերովքէից Երեքսրբեանդ սերովքէից Աթոռ անեղ Աստուածութեանն, ի համագոյ Երրորդութեանն . . .»:

Աւզելիի է ըստ Շարակնոցին (էջ 774—5) և Ժամագրքին (Տպ. Երուսաղէմ, 1915, էջ 342):

Բաղմաչեայ հոյլք քերովքէից Երեքսրբեանդ սրովքէից, Աթոռ անեղ Աստուածութեանն Համագոյ Երրորդութեանն . . .»:

6. — էջ 280, տող ծնթ. վարէն 4. Կիւրեղ Երուսաղէմացու «Պարապմանց գրքի» մեկնութիւն. — Պարապմանց գրքի հեղինակը, ինչպէս ծանօթ է, կիւրեղ Աղքասանդրոցին է: Յիշեալ գրքին վրայ Ն. Լամբրոսացիի կողմէ գրուած Մեկնութիւն ծանօթ չէ:

7. — էջ 299, տող վերէն 2. «Յոնքիմասնիցն մոկացեալ»: Աւզելիի՝ Յոնքիմասնիցը մոկացեալ»:

8. — էջ 333. — Դիտելի են տարրեր հաստատումներ Նարեկի մասին: Այսպէս. «Մատեանը չափածոյ ստեղծադութիւն է» (էջ 333): Մատեանը «արձակ գրուածք է, բացի մի քանի գլուխներից» (էջ 352):

9. — էջ 472, տող վերէն 14. «Զայնօրկնուրեան տեսաըն տեղին»: Աւզելիի՝ Զայնօրկնուրեան»:

Համ Հեղինակին սոյն «Գիրքը նախատեսուած է սփիւռքում հայագիտութեամբ զբաղուազ ուսանողութեան համար, ինչպէս և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրութեան են ծանօթանալու հայ գրականութեան հին և միջնադարեան արժէքներին»:

Վատահարար հայագիտութեան ուսանողները և հայ գրականութեամբ հետաքրքրութեանդ հաճոյքով և շնորհակալութեամբ պիտի կարգան այս հատորը, և պիտի ծանօթանան այն մեծարժէք ժառանգութեան, զոր մեզի թողած են մերպատուական նախնիքը:

Ն. ԱՐՔ. ՄՈՒԼԿԱՆ

